ք. Երևան «24» 11 2022թ.

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ ի դեմս Ծառայության պետ Սերգեյ Ատոմյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ն (այսուհետ «Համալսարան»)՝ ի դեմս Համալսարանի ռեկտոր Սուրեն Օհանյանի, որը գործում է Ընկերության Կանոնադրության և թիվ 0023, 0024, թիվ 993 պետական լիցենզիաների, թիվ 111, 14 հավատարմագրերի և ինստիտուցիոնալ հավատարմագրի N 27 (տրված 12.02.2019թ.) հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ «Կողմեր»),

բարձր գնահատելով Ծառայության պատրաստակամությունը Համալսարանի իրավագիտության ամբիոնում դասավանդվող «ՀՀ քրեակատարողական իրավունք» առարկայի ուսուցման շրջանակներում ուսանողների ստացած գիտելիքները գործնական մակարդակում ամրապնդելու կարևորությունը,

հաշվի առնելով Ծառայության ունեցած գործնական հնարավորությունները և Համալսարանի գիտակրթական ու գիտահետազոտական մեծ ներուժը,

նկատի ունենալով իրավագիտության ոլորտում գիտություն-պրակտիկա սերտ փոխգործակցությունն ապահովելու և անհրաժեշտ տեսական գիտելիքներ ու գործնական հմտություններ ունեցող իրավաբաններ պատրաստելու՝ Համալսարանի որդեգրած քաղաքականությունը և

ցանկանալով խթանել կոնկրետ Ծառայության ոլորտում համագործակցության իրականացմանը՝

կնքեցին սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ կետով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Սույն հուշագրով Կողմերը համագործակցում են՝

2.1.1.Համատեղ իրականացնել «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի իրավագիտության ամբիոնի ուսանողների գործնական հմտությունների ձևավորումը՝ «ՀՀ քրեակատարողական իրավունք» ուսումնական առարկայի շրջանակներում, մասնավորապես՝ ուսանողների այցերի կազմակերպումը Ծառայության ենթակայության ներքո գործող համապատասխան ստորաբաժանում կամ քրեակատարողական հիմնարկ՝ ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերի պահանջներին համահունչ՝ չխոչընդոտելով Ծառայության կամ քրեակատարողական հիմնարկի բնականոն գործունեությանը:

2.1.2. Ծառայության ենթակայության ներքո գործող համապատասխան ստորաբաժանում կամ քրեակատարողական հիմնարկ ուսանողների այցերը կազմակերպել նախապես Ծառայության հետ համաձայնեցված ժամանակացույցով՝ ուսանողների անձի նույնականացման և Ծառայությունում կամ քրեակատարողական հիմնարկում գործող անվտանգային այլ պահանջների խստագույնս պահպանմամբ:

2.1.3. Իրականացնել նոր մասնագիտական գրականության փոխանակում:

2.1.4.Փոխադարձաբար կազմակերպել և իրականացնել թեմատիկ տարբեր բովանդակությամբ գործնական քննարկումներ, վարպետության դասեր, փորձի փոխանակման նպատակով՝ հանդիպումներ ոլորտի մասնագետների հետ, կոնֆերանսներ՝ ՀՀ ներպետական իրավական համակարգի, ինչպես նաև միջազգային խնդիրների վերաբերյալ, մասնակից դարձնելով համալսարանի իրավագիտության ամբիոնի ուսանողներին:

2.1.5. Տեղեկատվություն հայցել և ստանալ՝ համատեղ իրականացվող աշխատանքների կատարման, ընթացքի, արդյունքների և դրանց խոչընդոտող հանգամանքների մասին:

2.1.6. Տեղեկատվություն հայցել և ստանալ՝ երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում Կողմերի գործունեությանը և մասնագիտացմանն առնչվող գիտագործնական, ինչպես նաև մասնագիտական և կազմակերպական բնույթի խնդիրների վերաբերյալ:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները սույն հուշագրով սահմանված համագործակցության ուղղություններով փոխգործակցությունը բարեխղճորեն, Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում կատարելու համար: Սույն հուշագիրը Կողմերի համար որևէ ֆինանասական պարտավորություն չի սահմանում:

4. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է անորոշ ժամկետով:

4.2. Սույն հուշագիրը կարող է լուծվել ցանկացած ժամանակ Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ այդ մասին մեկ ամիս առաջ մյուս Կողմին գրավոր տեղեկացնելով:

5. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԿԱՄ ԴՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

5.1. Հուշագրով նախատեսված համագործակցության շրջանակում Կողմերը կարող են համատեղ ծրագրերի իրականացման նպատակով կնքել լրացուցիչ համաձայնագրեր, որոնք չեն կարող հակասել Հուշագրին:

5.2. Հուշագրում փոփոխությունները կատարվում են փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Համապատասխան փոփոխությունները բովանդակող փաստաթղթերը կցվում են Հուշագրին և կազմում դրա բաղկացուցիչ մասը:

5.3 Սույն հուշագիրը կնքված է հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ

6. ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

6.1. Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանության հետ կապված տարաձայնությունները ենթակա են կարգավորման Կողմերի միջև բանակցությունների միջոցով:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախախարության քրեակատարողական ծառայության պետ, արդարադատության գեներալ-մայոր

ՍԵՐԳԵՅ ԱՏՈՒՅԱՆ

«Եվրասիա» միջազգային համալսարանի ռեկտոր, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՍՈՒՐԵՆ ՕՀԱՆՅԱՆ